

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Անահիտ Բախշյանի և Արմեն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագիծը չի բխում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հաստատած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից, որի համաձայն կապի բնագավառում պետք է ներդրվի ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգ: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ, համապատասխան հիմնավորումներով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը **2008** թվականի սեպտեմբերի **10**-ին ընդունել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որով **59**-րդ հոդվածը լրացվել է նոր **14**-րդ մասով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման թվային համակարգի ներդրման միջգերատեսչական հանձնաժողովի և Եվրոպայի Խորհրդի ներկայացուցչության միջև համաձայնություն է ձեռք բերվել համապատասխան Եվրոպական փորձագետի ներգրավման վերաբերյալ:

Ներկայացված նախագիծն, ըստ էության, հետընթաց քայլ է Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ առաջարկվող ծառայությունների բազմազանություն և միջազգային չափանիշներին համապատասխան բարձր որակ ապահովող կապի և հեռահաղորդակցության ոլորտի արդիականացման ռազմավարությունից:

Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերահաստատելով Հայաստանի Հանրապետության տարածքում անալոգային հեռարձակումից թվային հեռարձակմանն անցնելու իր մտադրությունը, դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում քննարկելիս հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին**

Հոդված 1. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (09 հոկտեմբերի 2000 թվականի, ՀՕ-97, այսուհետ՝ օրենք) 59-րդ հոդվածի 14-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Սույն օրենսդրական նախաձեռնության նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածով պաշտպանվող արտահայտվելու եւ տեղեկատվություն ստանալու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

Այն պայմանավորված է «Հեռուստատեսության եւ ռադիոյի» մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հեռուստահաղորդումների ազատ ընտրության, արտադրության եւ տարածման իրավունքի իրացման երաշխիքների ապահովման անհրաժեշտությամբ:

Օրենսդրական նախաձեռնությամբ հնարավորություն է ստեղծվում ցուցաբերել պետական հոգածություն եւ դրսևորել քաղաքական կամք՝ ընդառաջ գնալու ինչպես վերոնշյալ օրենքի կիրարկման, այնպես էլ ապահովելու ԵԽԽՎ 1643 բանաձևի 10.2-րդ կետի պահանջների կատարմանը, համաձայն որի՝ իշխանությունները չպետք է օգտագործեն թվային հեռարձակման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումների ձեռք բերումը՝ որպես հեռարձակման ազատ, արդար ու թափանցիկ մրցույթների անցկացումը սահմանափակելու կամ հետաձգելու պատճառ:

Այս օրենքի ընդունմամբ իշխանությունները կնպաստեն ազատ խոսքի, բազմակարծության կայացմանը, ինչպես նաեւ հասարակություն-իշխանություն փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորմանը: